Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԱՐՄՕՅԼ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 1513-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 57-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 58-88-րդ կետերով.

«

1	2	3	4	5	6	7
58.	7309	Ամբարներ, ցիստեռններ, բաքեր և նույնանման տարողություններ՝ սև մետաղներից, ամեն տեսակի նյութերի համար (բացի սեղմված կամ հեղուկացված գազից) 300 լ-ից ավելի տարողությամբ, երեսապատումով կամ ջերմամեկուսացումով կամ առանց դրանց, բայց առանց մեխանիկական կամ ջերմատեխնիկական սարքավորումների	կգ	121800	Իրան/Իրան	134,878,500
59.	7216	Անկյունակներ, ձևավոր և հատուկ պրոֆիլներ՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից	կգ	33000	Իրան/Իրան	15,180,500
60.	7208	Երկաթից կամ չլեգիրված պողպատից հարթ գլանվածք՝ 600 մմ կամ ավելի լայնությամբ, շիկացրոցված, ջերեսապատված, առանց գալվանական կամ այլ ծածկույթի	կգ	170000	Իրան/Իրան	78,570,000
61.	7308	Մետաղակոնստրուկցիաներ՝ սև մետաղներից (բացի 9406 ապրանքային դիրքի հավաքովի շինարարական կոնստրուկցիաներից) և դրանց մասերը (օրինակ՝ կամուրջներ և դրանց սեկցիաները, ջրարգելակների դարպասներ, աշտարակներ, վանդակավոր կայմեր, ծածկեր՝ տանիքների համար, շինարարական ֆերմաներ, դռներ, պատուհաններ և դրանց շրջանակներ, դռան շեմքեր, շերտափեղկեր, ճաղաշարքեր, հենարաններ և դրանց հենասյուներ), մետաղակոնստրուկցիաների մեջ օգտագործման համար նախատեսված թիթեղաթերթեր, ձողեր, ձևավոր պրոֆիլներ, խողովակներ և նույնանման արտադրատեսակներ՝ սև մետաղներից	կգ	160000	Իրան/Իրան	84,875,000
62.	6806	Խարամաբամբակ, սիլիկատային հանքաբամբակ և նույնանման հանքաբամբակներ, շերտավորված վերմիկուլիտ, փքված կավեր, փրփրած մետաղախարամ և նույնանման փքված հանքային արտադրանք, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ կամ ձայնակլանիչ հանքանյութերի խառնուրդներ և դրանցից պատրաստված արտադրատեսակներ՝ բացի 6811 կամ 6812 ապրանքային դիրքերում կամ 69-րդ խմբում ընդգրկված արտադրատեսակներից	կգ	60000	Իրան/Իրան	9,554,500
63.	7606	Ալյումինե սալեր, թերթեր, շերտեր կամ ժապավեններ՝ ավելի, քան 0,2 մմ	կգ	9000	Իրան/Իրան	12,270,500

1	2	3	4	5	6	7
		հաստությամբ.- ուղղանկյան (ներառյալ քառակուսու) ձև ունեցող				
64.	3816	Հրահեստ ցեմենտներ, շինարարական շաղախներ, բետոններ և նույնանման բաղադրություններ՝ բացի 3801 ապրանքային դիրքում նշված ապրանքներից	կգ	40000	Իրան/Իրան	9,215,000
65.	6902	Հրակայուն աղյուսներ, բլոկներ, սալիկներ և նույնանման հրակայուն կերամիկական շինարարական նյութեր, բացի սիլիկահողային քարային փոշուց կամ սիլիկահողային նույնանման հանքային ապարներից պատրաստված արտադրատեսակներից	կգ	20000	Իրան/Իրան	3,783,000
66.	7312	Ոլորված մետաղալար, մետաղաճոպան, մետաղապարաններ, հյուսված քուղեր, առասաններ և նույնանման արտադրատեսակներ՝ սև մետաղներից՝ առանց էլեկտրական մեկուսացման	մետր	460	Իրան/Իրան	13,580
67.	7311	Տարողություններ՝ սեղմված կամ հեղուկացված գազի համար՝ սև մետաղ ներից	կգ	3000	Իրան/Իրան	1,552,000
68.	7307	Կցամասեր՝ խողովակների կամ փողակների համար (օրինակ՝ միացքներ, ծունկեր, խողովակակցիչներ)՝ սև մետաղներից. - կցամասեր՝ ձուլածո	հատ	6	Իրան/Իրան	1,552,000
69.	3925	Շինարարական դետալներ՝ պլաստմասսայից՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	հատ	3	Իրան/Իրան	1,746,000
70.	7326	Այլ արտադրատեսակներ՝ սև մետաղներից. - կռած կամ դրոշմած, բայց առանց հետագա մշակման	հատ	25	Իրան/Իրան	1,358,000
71.	4009	Խողովակներ, փողակներ, ճկափողեր՝ վուլկանացված ռետինից՝ բացի կոշտ ռետինից, առանց կցամասերի և կցամասերով (օրինակ՝ միացումներով, կարճախողովակներով, կցաշուրթերով). -այլ նյութերի հետ այլ ձևով չամրանավորված կամ չհամակցված	մետր	200	Իրան/Իրան	727,500
72.	7318	Պտուտակներ, հեղույսներ, մանեկներ, հաստամեխեր, ներպտտային կեռեր, գամեր, երիթներ, երիթակներ, տափօղակներ (այդ թվում՝ զսպանականման) և նույնանման արտադրատեսակներ՝ սև մետաղներից. արտադրատեսակներ՝ ակոսակով ապահովված	կգ	1500	Իրան/Իրան	1,746,000
73.	4016	Արտադրատեսակներ՝ վուլկանացված ռետինից՝ բացի կոշտ ռետինից, այլ	կգ	300	Իրան/Իրան	1,018,500
74.	7616	Այլումինից պատրաստված այլ արտադրատեսակներ՝	կգ	500	Իրան/Իրան	1,212,500
75.	3925	Շինարարական դետալներ՝ պլաստմասսայից՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	կգ	300	Իրան/Իրան	1,067,000
76.	6813	Շփական նյութեր և դրանցից պատրաստված արտադրատեսակներ (օրինակ՝ թերթեր, գլանափաթեթներ, ժապավեններ, հատվածամասեր, սկավառակներ, տափօղակներ, միջադիրներ)՝ մոնտաժված. օգտագործվում են արգելակների, կցորդիչների կամ նմանատիպ հարմարանքների համար, ասբեստի, այլ հանքային նյութերի կամ թաղանթանյութի հիմքով՝ գործվածքների կամ այլ նյութերի հետ միասին կամ առանց դրանց	կգ	300	Իրան/Իրան	1,212,500
77.	7318	Պտուտակներ, հեղույսներ, մանեկներ, հաստամեխեր, ներպտտային կեռեր, գամեր, երիթներ, երիթակներ, տափօղակներ (այդ թվում՝ զսպանականման) և նույնանման արտադրատեսակներ՝ սև մետաղներից. Արտադրատեսակներ՝ ակոսակով ապահովված	կգ	300	Իրան/Իրան	873,000
78.	8311	Մետաղալարեր, ձողեր, խողովակներ, թիթեղաշերտեր, էլեկտրոդներ և նույնանման արտադրատեսակներ՝ ոչ թանկարժեք մետաղներից կամ մետաղների կարբիդներից, պատվածքով կամ հալանյութային միջուկով, որոնք օգտագործվում են ցածր ջերմաստիճանի կամ բարձր ջերմաստիճանի պայմաններում զոդման համար, մետաղների կամ մետաղների կարբիդների եռակցման կամ պարզեցման համար. մետաղալար կամ ձողեր՝ ոչ թանկարժեք մետաղների եռակցված փոշիներից, փոշեցրումով մետաղապատման համար օգտագործվող	կգ	10000	Իրան/Իրան	27,645,000
79.	9032	Սարքեր և սարքվածքներ՝ ավտոմատ կարգավորման կամ կառավարման համար	հատ	3	Իրան/Իրան	9,166,500
80.	9403	Այլ կահույք և դրա մասերը	հատ	3	Իրան/Իրան	1,164,000
81.	7304	Խողովակներ, փողակներ և սնամեջ տրամատներ՝ առանց կարի, սև մետաղներից (թուջե ձուլվածքից բացի). – խողովակներ՝ նավթամուղների և գազամուղների համար	կգ	45000	Իրան/Իրան	53,350,000
82.	3917	Խողովակներ, փողակներ, ճկափողեր և դրանց կցամասերը (օրինակ՝ միացումներ, արմունկներ, կցաշուրթեր)՝ պլաստմասսայից	կգ	8000	Իրան/Իրան	1,503,500
83.	9026	Սարքեր և ապարատուրա՝ հեղուկների կամ գազի ծախսի, մակարդակի, ճնշման կամ այլ փոփոխական հատկանիշների չափման կամ հսկման համար (օրինակ՝ ծախսաչափներ, մակարդակի ցուցիչներ, ճնշաչափներ (մանոմետրեր), ջերմահոսաչափներ)՝ բացի 9014, 9015, 9028 և 9032 ապրանքային դիրքերում նշված սարքերից և ապարատուրայից	հատ	50	Եվրոպա	8,148,000
84.	9025	Խտաչափներ և նույնանման սարքեր՝ հեղուկների մեջ ընկղմվելիս գործող, ջերմաչափներ, հրաչափներ, բարոմետրեր, խոնավաչափներ և խոնավաջերմաչափներ՝ գրանցող սարքվածքով կամ առանց գրանցման	հատ	13	Եվրոպա	1,231,900

1	2	3	4	5	6	7
		սարքվածքի, և այդ սարքերի ցանկացած համակցությունը՝ – ջերմաչափներ և հրաչափներ՝ այլ սարքերի չմիացված				
85.	9028	Հաշվիչներ՝ գազի, հեղուկի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման կամ արտադրության՝ ներառյալ ստուգարկիչները	հատ	7	Եվրոպա	1,697,500
86.	6907	Սալարկման քարեր, երեսապատման սալիկներ՝ հատակների, վառարանների, բուխարիների կամ պատերի համար, կերամիկական չջնարակված. կերամի-կական խորանարդիկներ՝ չջնարակված ՝ խճանկարային աշխատանքների համար և նույնանման արտադրատեսակներ՝ հիմքով կամ առանց հիմքի	քառ. մ	8500	Իրան/Իրան	33,950,000
87.	6802	Մշակված քար՝ հուշարձանների կամ շինարարության համար և դրանից պատրաստված արտադրատեսակներ (բացի թերթաքարից), բացի 6801 ապրանքային դիրքում ընդգրկված ապրանքներից. Խորանարդիկներ՝ խճանկարի համար և նույնանման արտադրատեսակներ՝ բնական քարից (ներառյալ թերթաքարը)՝ հիմքով կամ առանց հիմքի, արհեստական ներկած գրանուլներ, փշրանք և փոշի՝ բնական քարից (ներառյալ թերթաքարը)	քառ. մ	3000	Իրան/Իրան	21,825,000
88.	8528	Մոնիթորներ և պրոյեկտորներ, իր մեջ ընդունիչ հեռուստատեսային ապարատուրա չընդգրկող, ընդունիչ ապարատուրա՝ հեռուստատեսային կապի համար, իր մեջ լայնահեռարձակման ռադիոընդունիչ կամ ձայնը կամ պատկերը գրառող կամ վերարտադրող ապարատուրա ընդգրկող կամ չընդգրկող՝ – մոնիթորներ՝ էլեկտրոնաճառագայթային խողովակով	հատ	3	Չինաստան	970,000

».

2) հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «746 653 415» թիվը փոխարինել «1 269 710 395» թվով: